

# ՀԱՅԱՍՏԱՆ

## (Հայաստանի հանրապետություն)

Պետության ղեկավար՝ **Արմեն Սարգսյան**

Կառավարության ղեկավար՝ **Նիկոլ Փաշինյան**

2020 թվականին հայ-ադրբեջանական հակամարտության ընթացքում և դրանից հետո կատարված խախտումների զոհերի նկատմամբ պատասխանատվությունը կամ արդարադատությունը դեռևս տեղի չի ունեցել: Ավելի քան 100 մարդ զոհվել է կամ վիրավորվել հայկական ուժերի կողմից տեղադրված ականների պատճառով այն տարածքներում, որոնք հանձնվել էին Ադրբեջանին: Շուրջ 36,000 էթնիկ հայեր դարձել են փախստական կամ ներքին տեղահանված: Խաղաղ բողոքի ցույցերը հիմնականում թույլատրվել են կորոնավիրուսային համավարակով և ռազմական դրությամբ պայմանավորված սահմանափակումների վերացումից հետո, սակայն խոսքի ազատությունը և տեղեկատվության հասանելիությունը դեռևս շարունակվում է սահմանափակվել: Ամուլսարի ոսկու հանքավայրի բնապահպանական մտահոգությունները ևս մնացել են չլուծված: Ընտանեկան բռնությունը շարունակում է մնալ որպես համատարած խնդիր, որն էլ ավելի է սրվել կորոնավիրուսային համավարակի պատճառով:

Քաղաքական լարվածությունը Հայաստանում պահպանվել է ողջ տարվա ընթացքում: Հայ-ադրբեջանական հակամարտության արդյունքների պատճառով ամիսներ շարունակվող հակակառավարական բողոքի ցույցերի ֆոնին՝ ՀՀ վարչապետն ապրիլ ամսին հրաժարական տվեց, սակայն վերանշանակվեց կառավարության ղեկավարի պաշտոնում այն բանից հետո, երբ իր կուսակցությունը («Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը) հունիսին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքում մեծամասնության քվեն ստացավ:

Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանային անվտանգության հարցը շարունակում է մնալ անկայուն՝ պայմանավորված սահմանազատման գործընթացի անորոշությամբ: Երբեմն պատահական միջսահմանային մարտերի արդյունքում եղել են զոհեր՝ և՛ քաղաքացիական, և՛ զինվորական:

Կորոնավիրուսային համաճարակը և 2020 թվականի հակամարտությունն ու դրա հետևանքներն էլ ավելի են սրել երկրի տնտեսական դժվարությունները: Համաշխարհային բանկի տվյալներով՝ Հայաստանն ունեցել է ՀՆԱ-ի 8% անկում, ինչը հանգեցրել է 70,000 մարդու աղքատացման և 720,000 մարդու սոցիալական վիճակի վատթարացման: Համավարակի ընթացքում տարեցներն ու սոցիալական ցածր խմբերում ընդգրկված մարդիկ, սահմանափակումների և հանրային առողջապահական ռեսուրսների ոչ ճիշտ վերաբաշխման պատճառով, բախվել են առողջապահական խնամքի հասանելիության ավելի մեծ խոչընդոտների:

Զգալիորեն նվազել է նաև կենցաղային ու առաջին անհրաժեշտության ծախսերը հոգալու նրանց կարողությունը՝ մասնավորապես, կենցաղային, կոմունալ ծառայությունների, սնունդի, դեղերի և բժշկական ծառայությունների ոլորտներում:

Երկրում կորոնավիրուսային համավարակի դեմ կատարված պատվաստումների մակարդակը բավականին ցածր է: Հակապատվաստումային համատարած արշավի պայմաններում՝ մինչև դեկտեմբեր ամիսը բնակչության միայն 23%-ն էր ստացել պատվաստանյութի ամբողջական չափաբաժինը: Ի պատասխան վերոնշյալ արշավի՝ ՀՀ կառավարությունն օգոստոս ամսին պետական ոլորտի բոլոր աշխատողների և մասնավոր ընկերությունների բազմաթիվ աշխատակիցների համար «Covid-19»-ի դեմ պատվաստումը պարտադիր դարձրեց:

### ***Միջազգային մարդասիրական իրավունքի խախտումներ***

2020 թվականի հակամարտության ընթացքում և դրանից անմիջապես հետո ռազմական հանցագործությունների և միջազգային մարդասիրական իրավունքի այլ խախտումների հետաքննության, ինչպես նաև անհատական քրեական պատասխանատվության ենթարկելու կամ արդարադատության հարցում ոչ մի առաջընթաց չի գրանցվել:

Ավելի քան 100 մարդ զոհվել է կամ վիրավորվել հայկական ուժերի կողմից տեղադրված ականների պատճառով այն տարածքներում, որոնք հանձնվել էին Ադրբեջանին: Ադրբեջանի կողմից հայ գերիներին վերադարձնելու դիմաց՝ Հայաստանն փոխանցել է Ադրբեջանին մի շարք ականապատված տարածքների քարտեզներ: Դեկտեմբեր ամսին Եվրոպական խորհրդի նախագահը զեկուցել է, որ Հայաստանն Ադրբեջանին է փոխանցել ականապատ տարածքների բոլոր քարտեզները, այնուամենայնիվ Ադրբեջանի կողմից այդ քարտեզների ճշգրտությունը վիճարկվել է:

### ***Ներքին տեղահանված անձանց իրավունքներ***

2020 թվականին, մարտերի ամենաթեժ պահին, տեղահանված մոտ 91,000 անձանցից շատերն արդեն վերադարձել են Ստեփանակերտ/Խանքենդի և Լեռնային Ղարաբաղի այլ շրջաններ, որոնք մնացել են Հայաստանի վերահսկողության տակ: Տեղահանվածներից մոտ 36,000 մարդ դեռևս մնացել է Հայաստանում և Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանի կողմից վերահսկվող տարածքներում: Այդ անձանցից 24,000-ն Ադրբեջանի կողմից վերահսկվող տարածքներից երկարաժամկետ տեղահանման է ենթարկվել: Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանի վերահսկողության տակ գտնվող տարածքներ վերադարձաններից շատերը մի շարք դժվարությունների բախվեցին՝ պայմանավորված ապրուստի միջոցների, կրթության և առողջապահության թերի հասանելիությամբ:

### ***Հավաքների ազատություն***

Խաղաղ հանրահավաքներ ու բողոքի ցույցեր հիմնականում թույլատրվել են ամբողջ տարվա ընթացքում: Հունվար ամսին կառավարությունը չեղարկել էր հանրային առողջության և արտակարգ իրավիճակների մասին օրենքների հետ կապված սահմանափակումների մեծ մասը՝ ներառյալ հանրային հավաքների սահմանափակումները, որոնք սահմանվել էին անվտանգության նկատառումներով և կորոնավիրուսային համավարակի պատճառով:

### ***Խոսքի ազատություն***

Ազատ կամարտահայտման իրավունքը կամ խոսքի ազատությունը շարունակվեց անհիմն կերպով սահմանափակվել: Կառավարությունը մի քանի օրենսդրական փոփոխություններ իրականացրեց, որոնք սահմանափակում են անկախ լրատվամիջոցների գործունեությունն ու այլ քննադատական ձայները: Մարտ ամսին ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելով, վիրավորանքի և զրպարտության համար նախատեսվող դրամական փոխհատուցումը հասցրեց 6 միլիոն դրամի (մոտ 12 000 ԱՄՆ դոլար): Օգոստոս ամսին օրենսդրական փոփոխությունների մեկ այլ փաթեթով էլ ԱԺ-ի կողմից քրեականացվեց հասարակական գործիչներին վիրավորելը: Ըստ կատարված փոփոխությունների՝ կրկնակի վիրավորանքների համար սահմանվեց պատիժ՝ մինչև երեք ամիս ազատազրկում: Հիմնվելով օրենսդրական փոփոխությունների վրա՝ սեպտեմբերին ոստիկանությունը քրեական գործեր է հարուցել ֆեյսբուքյան օգտատերերի դեմ՝ վարչապետի լուսանկարի տակ վիրավորական մեկնաբանություններ գրելու համար:

Իշխանությունները շարունակեցին անհիմն քրեական հետապնդում իրականացնել Հայաստանում գործող «Մարդու իրավունքների եզդիական կենտրոն» ՀԿ նախագահ Սաշիկ Սուլթանյանի նկատմամբ: Նրա նկատմամբ հետաքննությունը սկսվել էր 2020 թվականի հոկտեմբերին՝ իր կողմից առցանց տրված հարցազրույցից հետո, որում խոսելով Հայաստանում բնակվող էթնիկ եզդիների առջև ծառայած խնդիրների մասին, քննադատաբար էր վերաբերվել Հայաստանի՝ ՀՀ-ում ազգային փոքրամասնություն հանդիսացող եզդիների նկատմամբ վերաբերմունքին: Նրա դատավարությունը սկսվել էր օգոստոս ամսին և շարունակվել մինչև տարեվերջ: Եթե նրան մեղավոր ճանաչեն, ապա նրան սպառնում է երեքից վեց տարվա ազատազրկում:

Գլխավոր դատախազությունը և պետական քննչական մարմինները չկարողացան արդյունավետ հետաքննություն ծավալել՝ 2020 թվականի հակամարտությունից հետո ՀԿ-ների և լրատվամիջոցների դեմ, այդ թվում՝ «Ազատ Եվրոպա/Ազատություն» ռադիոկայանի և «Բաց հասարակության հիմնադրամների» գրասենյակների վրա հարձակումներն ու թալանը բացահայտելու և սպառնալիքները վերացնելու նպատակով:

### ***Շրջակա միջավայրի քայքայում***

Հայաստանի հարավում գտնվող Ամուլսարի ոսկու հանքի շահագործման նախագիծը դեռևս կասեցված է, քանի որ պետք է սպասել հանքի շահագործման՝ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության մասին տեղեկությունները դիտավորյալ թաքցնելու վերաբերյալ շարունակվող քրեական հետաքննության արդյունքներին: Հետաքննությունը սկսվել է 2018 թվականին՝ տեղի բնակիչների և բնապահպանների բողոքի ցույցերից հետո:

### ***Կանանց իրավունքներ***

Կորոնավիրուսային համավարակի ընթացքում կանայք շարունակում են ենթարկվել ընտանեկան բռնության, մինչդեռ կանանց իրավունքների պաշտպանության հասանելիությունը և աջակցման ծառայությունները դեռևս անբավարար են: Համաճարակը նաև սրել է չվարձատրվող աշխատանքի ծանր «բեռը», որը շարունակում էր հիմնականում ընկնել կանանց և աղջիկների ուսերին: